

նասնոց պէս լիկ բնազդմամբ գործելու ստիպուած ըլլար, չը պիտի կրնար իր այս վսեմ նպատակին հասնիլ, ուստի ամենաբաւական բարին անոր տուաւ ըլլար, այն պայծառ բանը, որով կը խորհինք, կը դատինք, կ'ընտրենք և ապա կը գործենք:

Ս'արդէն իր ամեն գործառնութեանց մէջ այս լուսոյ շնորհիւ յառաջանալու տրամադիր էակ մը է, բայց սա ալ մեքենական բան մը կ'ըլլար, եթէ մարդուն ձեռքը չըլլար յառաջագիմելու կամ յետագիմելու կարողութիւնը:

Կ'ստայս կարողութեան ալ տէր է մարդը, այսինքն ունի անձնիշխան կամք, ուղէ յառաջ կերթայ, ուղէ չերթար, ուղէ կը գործէ, ուղէ չը գործեր, ուղէ բարիք կ'ընէ, ուղէ չը նէր, միով բանիւ ուղէ ինքզինքը թշուառ կ'ընէ զՍտուած մերթելով, որ իրեն այս ամեն կարողութիւնը տուաւ, նմանապէս երջանիկ կ'ընէ, Ստուածոյ ձայնին անսալով: Եւ ձայնն է մտաց խիղճը, որ իւրաքանչիւր անհատի մէջ զետեղուած կայ, և ուրուն Գիտական-Ինքն ալ կ'ըսեն:

Ո՞վ է այն՝ որ այս ձայնը կը խեղդէ: — Սարդկանց ամենէն ամբարըշտագոյնը:

Սարդիկ չէին կրնար գիտնալ Ստուածոյ կամքը և ոչ ըմբռնել անոր յայտնութիւնները եթէ այս ձայնը իրենց ներսիդին չունենային:

Ստուած բարեգործութեան հետ հաճութիւն, և չարագործութեան հետ՝ տհաճութիւն կոպած է բնութեան անսխալ խելի օրինօք, որով մեր բարի ըլլալ ուղեւորն բնաւ տարակոյս չը մնար:

Բնութիւնը կը մղէ զմարդ իւր ընկերին օգնելու, և վերցնել հանելու այն թշուառութեան վէճէն, ուր

նա ինկած է կամ անգիտութեամբ և կամ ուրիշին ազդեցութեամբ:

Ս'իթէ այն անհատը կամ ազգը՝ երբ այսպէս թշուառ անհատ մը կամ ազգ մը ինկած կը տեսնէ և չօգնէր, կրնայ իր մտաց խղճին բուռն հարուածներուն առանց անզգայութեան վատ յորջորջումը վրան առնելու, Եւ միթէ իրեն այս անհոգութեան հաշիւը պիտի չը տայ:

Ս'իթէ ինքն ալ մարդ և ազգ ըլլալով, կրնայ միշտ իւր հաստատութեան վրայ ապահով ըլլալ, վերջապէս կը յուսայ որ ինքն ալ օր մը պիտի չինայ:

Հապա ո՞ւր կը մնայ, որ չվերցնէլէ զատ, ալ աւելի խորագոյն զայն գլորելու ջանայ, ուրիշը չը կարողանայ երբեք ելլելու յոյս ունենալ ու զորմելի թշուառը:

Ի՞նչ անուն տալու է այն անհատին կամ ազգին, որ փոխանակ ընկածը վերցնելու, նոյն իսկ կանգուն եղողն ալ կը ձգնի ձգել և թշուառացնել:

Բ'ութեան — Գաղղիական պատերազմիս նպատակն ինչ է: — Եթէ ոչ կործանել կանգնեալը, Ես ամենայն իրաւամբ յետագէմ պիտի անուանեմ այս ազգերը, որք թէպէտ մարդկութեան եղջիւրը շատ պարագայներու մէջ բարձրացուցին, սակայն ներկայ յետագիմական և մարդկութեան նուաստացուցիչ գործով խորտակելով ցածրացին զայն, և յաւիտենական անջնջելի արատ մը թողուցին անոր ճակտին վրայ, զոր իրենց սերունդը յաւիտեան չպիտի կրնան բերել:

Կ'ստի՞րելի ընթերցողք, այս արատը, այս յետագիմութիւնը 1870 թուականին ծնունդն ըլլալով, անոր ճակտին վրայ սեւ դրօշմուած տես

նուեցաւ իր հեռանալու ժամանակը՝ Օայն ամեն մարդ տեսաւ և զգաց, հետևաբար անոր թողուցած սոսկալի մտորը ամենուն ալ մի և նոյն ազդեցութիւնը ունեցաւ, ամենուն ալ թշուառութիւն գուժեց։

Աւրեմն մենք ալ կարծեմ տուած եղանք մեր չորս հարցմանց պատասխանները։

Արդ՝ մարդկութիւնը արժանապէս կը վարձատրէ թէ՛ յառաջագէտն և թէ՛ յետագէտն։

Սիւն վարձքն է պարծանք և գուլեստ, իսկ միւսոյն նախատինք և պարտաւ։

Սիւն՝ սրտերու մէջ անմահ մնալու փառք, իսկ միւսոյն՝ արհամարհանօք մերժումն։

1870 թուականը մարդկութեան համար թշուառութեան թուական մը եղաւ ընդհանրապէս, հետեւապէս համայն մահկանացուաց վրայ կը ծանրանայ առ հասարակ։ Արովհէտեւ նա իւր անիւր արագ արագ քայլեցնելու ժամանակ յանդգնեցաւ ջախջախել անոր տակ միլիոնաւոր գլուխներ, գլուխներ՝ որոց ամեն մէկը անմահ հոգի, լոյս, կարողութիւն, վերջապէս ամենայն մարդկային ինչ ունէր, մարդկութիւնը յառաջացրնելու համար, իբր անոր մէկ անդամը։ Սոսկալի թուական։

Իսկ մասնաւորապէս Հայոցս համար ինչ արդիւնք ունեցաւ 1870 թուականը։

Բացատրենք։

Ով որ դառն ճշմարտութիւններ պէտք եղած ատեն յայտնելու կ'աւանդէ կամ կը վախնայ, նա ճշմարիտ և վեհանձն քաղաքացի չէ։

Ապա ինչո՞ւ մեր սրտով զգացած ճշմարտութիւնները բերանով պիտի չքարոզենք և գրչով պիտի չհրա-

տարակենք, երբ անհրաժեշտ հարկ կայ։

1870 թուականը հայ ազգային կենաց շղթայն այն ժանդուտած օղակներով կաղմուած թողուց, որովք արդէն հիւսուած էր։

Այս շղթային օղակները պէտք ունէին նորոգութեան, բայց մենք նախամեծար համարեցինք թողուլ զանոնք որ փոտին։ Պարզ խօսինք։

Հայ ազգը՝ որ 10-12 տարիէ ՚ի վեր իր մէջ վսեմաստի մտքի տէր, արդարութեան սիրող և ճշմարիտ ազատութեան պաշտպան անձանց բազմանալը տեսնելով ՚ի սիրտ և ՚ի հոգի կը հրճուէր և կը յուսար որ... բայց իր ամեն յոյսերը ՚ի դերեւ հանեց կրնամ ըսել 1870 թուականը... ամիսն որ դարձեալ կէտերով խօսիլ կըստիպուինք։

Կեցիր, հիմա պիտի ապացուցանեմ ինչ որ վերը գրեցի։

Ինթերցողը թող յիշէ այն ամեն խնդիրները, մահաբերադիրներն ու բողոքադիրները որք վարչութեան դիւանին մէջ կը վիստային, երբ այս անտարբերութեան կամ աւելի լաւ ըսեմ՝ սնոտի և խռովայոյղ վիճաբանութեան թուականս սկսաւ։

Թող յիշէ այն ընկերութիւնները, որք տասը տարիէ ՚ի վեր մեր ազգին մէջ սկսեր էին բաղմանալ զանազան բարենպատակ անուամբ, և որք բաւական լոյս տարածեցին և մեր նիւթապէս և բարոյապէս թշուառացեալ ազգին առջեւ բանալ ջանացին արահետ ճանապարհ մը, որ կը տանէր ՚ի կեանս։

Թող յիշէ կ'ըսեմ ընթերցողը այն որ ամենէն սարսափելին է, և որ ազգութեան կենաց և մահու խնդիրն է, այն է կաթողիկոսական խնդիրները, որք առաւել ազգին աղէտից և

երկրպառակութեան պատճառ կը դառնան :

Այս ամենը յիշող ընթերցողը՝ չի պիտի կրնայ չհամոզուիլ թէ 1870 թուականը մեզ համար անգործութեան թուական եղաւ :

Որովհետեւ նա կը տեսնէ որ մի և նոյն խնդիրներն ու բողոքադիրները դարձեալ կը տեղան ի պատրիարքարան :

Սի և նոյն , տգէտ բռնաւոր չլապաճի աղայից խումբը դեռ իր հարուստ ազդեցութիւնը ընկճելոց վրայ կը տարածէ :

Նա կը տեսնէ որ օգտաւէտ ընկերութիւնները 1870 թուականի մէջ փոխանակ օրքան զօր բազմանալու նուաղեցան , առ ի չգոյէ քաջալերութեան և նպաստից :

Չիսխալինք սեռօրէն խօսելնուս , այն ընկերութեանց շատերը գիտենք որ իրենց ապօրինաւոր ընթացքովը խափանեցան : Ազգին քաջալերութիւնը , նպաստը և համակրութիւնը ընդունելով չարաչար գործածեցին եւ կործանեցան . արժանի իսկ էին այդ կործանման : Այն դրամով հարստանալ կարծող անդամները գուցէ այսօր մուրացիկ կը շրջին . և ահա այն իսկ ասոնք են որ իրենց վատութեամբն ու ապերախտութեամբը ազգին վառահոլութիւնը վերցուցին , որ չհամարձակիր այսօր օգնելու նաեւ օրինաւորներուն . որովոյժ նուազած է անոնց թիւը : Այսու առ մենայնիւ չենք կարող մոռնալ Անձնանուէր ընկերութիւնը , որուն թըշուառ ազգիս մատուցած ծառայութիւնները , անոր լուսաւորութեան և բարոյական կենաց վերանորոգութեան համար թափած ճգունքն ու ըրած զոհողութիւնները՝ արդարեւ զարմացման և վարույց արժանի են , և

զանոնք մօտէն տեսնողները զարմացրնելով գոչել կը տան . « ահա ընկերութիւն մը , որ բուն ազգին օգտին վրայ հիմնուած է :

Նիճանուէր ընկերութիւնը խիստ մեծ վարձատրութեան , քաջալերութեան և ճշմարիտ գովեստից արժանի է : Այլ ազգը ըստ արժանւոյն , ինչպէս որ իր պարտաւորութիւնն է , չը կրնար կամ չը կամիր վարձատրել անոր ազգասէր անդամները , սակայն անոնք այնչափ արիասիրտ են , որ չը վհատեցան և պիտի չը վհատին . այլ կատարեալ վարձ կը համարեն իրենց ծառայութեանց արտադրած օգուտը և ազգասէր սրտերու մէջ եռացող այն երախտագիտական սուրբ զգացումները , որք օր մը անմահ և մըշտընջե՛նաւոր արձաններ պիտի կանգնեն հոն այն սրտերուն մէջ , յանուն այն ընկերութեան , որ նոյն զգացմանց տղբիւրն ու շարժառիթն է : Սէնք չենք կարող անոր արժանաւորութեան համեմատ փոխարինութիւն մի ընել , ուստի յարատեւութիւն և յաջողութիւն մաղթելով դառնանք մեր խընդրոյն :

Ինթերցողն այս ամենը տեսնելէն դինի , կը տեսնէ նաեւ ցաւօք սրաի որ այն կաթողիկոսական կենաց և մահու խնդիրն ալ ոչ միայն իր օրինաւոր լուծումը , առկալին չառաւ , այլ մանաւանդ ծանր կերպարանք առնուլ կըսկսի :

Իայց շատ ապերախտ պիտի համարուէինք , եթէ 1870 թուականի մէջ տեղի ունեցած ըստ ինքեան նըշանաւոր՝ բայց գրեթէ ապարդիւն դէպք մը մէջ չը բերէինք :

Որն է այս դէպքը : — Արիկայ խըրիմեան Հայրենասէր վարդապետին Հայոց ազգին պատրիարք ընտրուիլն

է, անոր ազգին հովուութեան սրաշտոնը ընդունելն ու յանձն առնուլն է, չիմա գուցէ ընթերցողը հակառակութիւն նշմարելով խօսքիս մէջ, առարկէ թէ « եթէ Խրիմեան հայրենասէր է, ապա ազգը աղատուած է է, ուրեմն 1870 թուականի մէջ մեծ գործ մը գործած է, միով բանիւ աղգային կենաց զլծայն նորոգուած է և ոչ թէ փոտեղու սպառնալեաց կամ երկիւ զի տակ :

Համբերէ, սիրելիս, ատանկ չէ, այլ միտ դիր ըսածիս :

Խրիմեան Սրբազանը հայրենասէր և միանգամայն հօտասէր առաջնորդ մը հովիւ մ' է, (որոյ սրտէն բղխած են հրաւիրականներն) այլ անոր խաշինքը եթէ իրեն ձայնը չեն լսեր, ի՞նչ ընէ, իրեն հաւատարիմ ընկեր և օգնական ըստ բաւականին չունի, որոնց մով կարողանայ իր խաշինքը պահպանել գայլոց բերանն իյնալու վտանգէն, և ի՞նչ պիտի ըսես, թէ որ յայտնեմ թէ ասոնցմէ գտնուեցաւ նաեւ գայլոց հետ գաշնադիրներ խաշանց և հովուին դէմ զինելու :

Վաշխարհական և եկեղեցական պաշտօնատարք և երեսփոխանք, եթէ Հայկայ, Մարմայ, Տիգրանայ և քաջարւոյն Վարդանայ վեհ արիւնէն տակաւին ձեր երակներուն մէջ կաթիլ մի մնացեր է, եթէ Վրիգորի, Սահակայ, Սարգսայ և Ներսիսի հայութեան պատիւ բերող անստորգտանելի շաղագ հետեւելու փափաք դեռ կը սնուցանէք ձեր սրտին մէջ, զի ուրեմն, ջանացէք փրկել անոնց երբեմն երջանիկ՝ բայց այժմ թշուառ սերունդը իւր այս վտանգալից վիճակէն :

Պաշտպանեցէք, պաշտպանեցէք այն վարատեալ հօտը, որ անմեղ է, խղճալի է և զուրկ իր պարարտ արօտնէ,

բով ծածկուած աղետալայրէն . . . :

Ի՞նչ, միթէ հովիւը միայնակ թողուլը, խաշինքը թշնամեաց, գողոց և գայլոց մատնել չէ : Քաջ գիտցիք որ դուք Հովուին համար չը պիտի պահպանէք հօտը, այլ ձեր պարտքն է ասիկայ : Եթէ հովուէն վրէժ առնելու համար կ'ընէք, գիտցիք որ պարտադանց էք :

Հայկազունք, քաջալերուեցէք, միացէք : Սրտով միացէք, մոքով միացէք, հոգւով միացէք :

Հոգւով և սրտով երբ միանաք, ալ գիւրին է ձեզ մոքով միանալը, այսինքն կարծեաց մէջ միանալը⁽¹⁾. ուրուն տարակայութիւնն զգալի կերպիւ մեր ազգին տունը կը քանդէ, իւր մէջ անտեղի վիճաբանութիւններ յարուցանելով :

Չգեցէք, ձգեցէք հին ատելութիւնը, վրէժխնդրութիւնը և որ մեծըն է անձնական շահը և մասնաւոր նկատումները :

Սէր զգեցէք, որ զիւրն չընդդէմ, այլ զընկերին :

Ուր որ սէր, հոն միութիւն, ուր որ միութիւն, հոն յաղթութիւն :

Ուր յաղթութիւն, հոն կենդանութիւն և յառաջագիմութիւն :

Եւ այս կենդանութիւնը, այս յառաջագիմութիւնը 1871 թուականը իրեն հետ թող բերէ Հայոց աղգին. այս յուսածիճաղ ամանորը մեզ համար շնորհաւոր թող ըլլայ, որուն մէջ յաջողութիւն կը բարեմաղթեմ ՚ի խորոց սրտի բոլոր լըգային բարենպաստակ գործոց համար :

1870 Դեկտեմ. 12

Երոստաղէմ :

Ս. Միքիլ S.

Սպեխանիան :

(1) Կարծեաց միութեան վրայ ուրիշ առթիւ մը միտք ունինք խօսելու :